



ԽՈՐԱՅՐԵՔ ԶԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Քաղցրահամ ջրի պաշարների կառավարման նոր համակարգային մոտեցումը: Կլիմայի փոփոխության հետևանքով անհրաժեշտ կլինեն ամբողջությամբ վերանայել ջրային պաշարների կառավարման համակարգը, հակառակ դեպքում ուժեղ երաշտներից, ջրհեղեղներից կամ քաղցրահամ ջրի պաշարների պակասից առաջացած վնասներն ու կորուստները կարող է հասնել աղետալի ծավալների: Կառուցելով նոր ջրամբարներ և կարգավորիչ ամբարտապաններ մենք կարող ենք կառավարել գետերի հոսքը, իսկ դրանց ամբարտապաններն ապավանհում ենք կառավարելով՝ պաշտպանվելու ուժեղ ջրհեղեղներից ու հեղեղումներից:

Պահպանել անտառային տարածքները, հարկապես լեռնալանջերի վրա տարածվող հարվածները: Ծառերի արմատները պահպանում են հողը ողողամանուկից և տեղափոխում:

Սկսենք ճիշտ և խնայողաբար օգտագործել ջուրը: Օրինակ՝ կարելի է օգտագործել անձրևաջրերը, տեխնիկական նպատակների համար սրբեցնել ջրի կրկնակի օգտագործման համակարգեր (օրինակ ավտոմեքենաների լվացման կայանքներում), մաքրման կայաններում նախապատվությունը տալ ջրի մշակման ու մաքրման կենսաբանական և մեմբրանային տեխնոլոգիաներին, իսկ ոռոգման համակարգում արմատավորել անձրևացման և կաթիլային ոռոգման մեթոդները:

Ինչո՞ւ կաթիլային և անձրևացմամբ ոռոգումը նախընտրելի է: Այս դեպքում հնարավորություն է սրբեցնել մշակաբույսերի աճի ու զարգացման բոլոր փուլերում ապահովել օպտիմալ ջրային, օդային և սննդային ռեժիմ: Ջրի օպտիմալ խոնավությունը նպաստում է մշակաբույսերի հավասարաչափ աճին ու զարգացմանը, բացակայում են մշակաբույսի ջրային սթրեսները, հողի գերխոնավացումը, ինչը նպաստում է բերքատվության և բերքի որակի բարձրացմանը: Ոռոգման ջրի ծախսը անձրևացման ժամանակ կրճատվում է մոտ 3 անգամ, իսկ կաթիլային ոռոգման դեպքում 10-12 անգամ:

Ներկայիս արբանյակային համակարգերը և օդերևութաբանական համաշխարհային տեղեկատվական ցանցը հնարավորություն են տալիս կանխատեսելու և իրազեկելու վրանգավոր եղանակային երևույթները, ինչպես օրինակ՝ հորդառատ անձրևները, կանխորոշելու երաշտի հավանականությունը:

1993թ. ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը մարտի 22-ը հռչակեց «Ջրի համաշխարհային օր»: Դրա նպատակն է մարդկությանը մշտապես հիշեցնել ջրի այդ բացառիկ պաշարի, Երկրի վրա կյանքի հիմքի, մեր գոյության գլխավոր միջոցը մասին: